

**ԱՍԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Արվեստագիրության թեկնածու**

**17-18-րդ դարերի ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕԶԱԽՆԵՐԻ
ԳՐՉԱՏՆԵՐԻ ՄԱՆՐԱԿԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Հայ գրչության կենտրոնների պատմությունը թեև գիտական համակողմանի քննության է ենթարկվել, սակայն գրչության որոշ օջախներ, որոնց թվին են պատկանում Կոստանդնուպոլիսից արևմուտք գտնվող Աղրիանուպոլիսը, Մակեդոնիան¹, Թրակիան², Թերդրադը և այլ բնակավայրեր, որուր են մնացել ուշադրությունից:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվել է ձեռագրերի մի հարուստ հավաքածու, որոնք ընդօրինակվել են հիշյալ գրչատմերում:

Աղրիանուպոլիս քաղաքը կառուցել է Հռոմի Աղրիանու կայսրը և կայսրի անվամբ էլ կոչվել Աղրիանուպոլիս: Մեզ հասած հայ գրչության հուշարձաններից է Աղրիանուպոլիսում գրված 1007 թվականի Ավետարանը³, որտեղ պատկերված է ձեռագրի պատվիրատու հայ իշխանավոր Հովհաննես պրոտոսպաթարի (պատվիրատուի) դիմապատկերը: Նա եղել է Բյուզանդիայի կայսր Վասիլի (976-1025 թթ.) առաջին սուսերակիրն ու Թեոդորոկանու դուքսի սպասավորը: Ձեռագրի նկարիչն անհայտ է, հարդարված է բարձր արվեստով, իսկ պատվիրատուի տարազը համապատասխանում է իր պաշտոնի⁴: Ձեռագրին ունի նաև ավետարանիչների պատկերներ, իսկ խորանները, իրենց համապատասխան գունավորմամբ և ոճավորմամբ, աղերավում են հայկական գարդամոտիվներին:

Աղրիանուպոլիսում հայ կյանքն առավել աշխուժացավ 16-րդ դարում: Կառուցվեցին հայկական եկեղեցներ, իսկ դրանց կից, աճշուշտ, ստեղծվեցին գրչատմեր, որոնք մեծ ճանաչում գտան հատկապես 17-18-րդ դարերում:

Այստեղ հարկ է հիշել հատկապես Աղրիանուպոլիսի շնորհալի գրիչ և նկարիչ Մինաս Էտրունցուն: Նրա ընդօրինակած ձեռագրերում հիշատակվում է իր՝ գրիչ և ծաղկող լինելու մասին. «Յիշեցեք... Զայս Էտրունցի տէր Մինաս քաջ քարտուղարին Առյապէս և ուկեալ ծաղկեաց երին-երին և գոյն զանազան-զանազան, զո տացէ իլրն առանց իմաստութիւն և հմտութիւն»⁵:

Մատենադարանում ունենք մրա գրչագրած ու նկարագրած 17-18-րդ դարերին

¹ Նկարի ունենք Մակեդոնիայի հունական մասը, Սևլանիկ կենտրոնով:

² Մարգ Շուսափանի հյուսիս-արևելքում, Էզիյան ծովի ափին:

³ Վենետիկ, Ձն. 887, լ. 8ա, նաև՝ Հայկական մասրանկարչութիւն Մխիթարեան Մագիստրատանի ձևոացք, Վենետիկ, Ս. Ղազար, 1966 թ., նկ. 30:

⁴ Տե՛ս ևս Ա. Գևորգյան, Հայկական մասրանկարչություն-դիմանկար ալրում, Երևան, 1982, նկ. 1:

⁵ Մագիստրատան, Ձն. 2229, լ. 344:

պատկանող ութ ձեռագիր⁶, որոնք ժողովածուներ են, նաև՝ «Մաշտոց ձեռնադրութեան», «Տաղարան», «Ուրբաթագիրք»: Այս ժողովածուներում տեղ են գտնել Առաքել Սյունեցու, Գրիգոր Տաթևացու, Մարտիրոս Ղրիմեցու և ուրիշների ատեղծագործությունները: Ժողովածուներում պատկերված են նաև Բիշյալ Բեղջինակների դիմապատկերները, որոնցից շատերն ունեն անձը բնորոշող համապատասխան ուշագրավ հորինվածքներ և կատարված են բարձր վարպետությամբ: Ասվածը վերաբերվում է նաև հոգևորականների դիմապատկերներին:

Կան նաև Աղրիանուպոլսում ընդօրինակված 18-րդ դարի ձեռագրեր, որոնց ծաղկողներն անհայտ են և Բիշյուն են միայն գրիչների անունները: Այդ ձեռագրերը նոյնպես մեծ մասամբ ժողովածուներ են՝ բովանդակությանը համապատասխան դիմապատկերներով ու գեղարվեստական ձևավորմամբ:

Հետոքքիր է գրիչ Սարգսի 1733-1735 թվականներին ընդօրինակած ժողովածու⁷, որ գտնվում է և «Վերա թանաք շինելոյ» գործը, որը հնարավորություն է տալիս մտածելու Աղրիանուպոլսում գոյություն ունեցող գրչառների և հրանց գրչության արվեստի մասին:

Եվրոպական Թուրքիայի հայ գրչության կենտրոններից է եղել Մակեդոնիայի մայրաքաղաքի Սալոմիկեի գրչառունը: Այսուել 1644 թվականին գրիչ Ասատուր ընդօրինակել է Ներսես Շնորհալու «Բանք չափալը»⁸: Ձեռագրում գետեղված է Շնորհալու դիմապատկերը:

Գրիչ Ասատուրի Բիշյատակարանում իր մասին կան հետևյալ տեղեկությունները.

«Բազմաշխատ յոյժ ջանացի
ի գտանել յօրինակի:
Զեռամբ տղիսա փծուն գրչի,
Աստուածասուր անարժանի
Աւարտեց բանս ի կարգի,
Մայրաքաղաքն Մարեթոնի
Ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի:
Գծագրեցի զաա կամովի,
ի վայելուն Առաքելի...»

.....
Եւ զուսուցիչն իմ ըզբարի
Սարգսի ամուն կրօնաւորի
Բազում բանօք աշխատելի
Յոյժ աշխատեցաւ նա վասն իմի
Մինչև հասոյց արուեստ գլորիչ»:

17-18-րդ դարերում հայ գաղյականությանը տեսնում ենք նաև Ռուսություն (այժմ՝ Թու-

⁶ Ա. Գևորգյան, «Նայ մանրանկարիչներ-Մաքրնագիրություն, IX-XIX դարեր, Կամիրն, 1998, լ. 344:

⁷ Զն. 1387:

⁸ Զն. 1542, լ. 292-296ր:

քիրղաղ) և Գելիպոլու բնակավայրերում, որոնք գտնվում են Մ'արմարա ծովի Գյոկչեաղա կղզու մոտ գտնվող թերակղզում: Այստեղ հայերը բնակություն են հաստատել դեռևս 14-րդ դարից:

Թեքիրդաղի հայ զրչատմերից մեզ հասած մատյանները վերաբերվում են 17-րդ դարին: Դրանք ժողովածութեր են՝ ընդօրինակված 1608-1699 թվականներն: Այս զրչատմերում ևս նախապատվությունը տրված է հայ մատենագրությանը՝ Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Տաթևացի, Հակոբ Ղրիմեցի, Հովհաննես Արճիշեցի և այլք: Հիշատակվում է զրիչ Խաչատորիի ընդօրինակած «Կանանագիրը», որն այժմ գտնվում է Հռոմի թանգարանում⁹, նաև զրիչ Արիստակես Թեքիրդաղցու «Պատմութիւն Յովակիմայ և Աննայի»:

Թեքիրդաղում հայ մշակույթի և կրթության զարգացմանը մեծապես նըպաստել է տեղի հայոց թեմակալ առաջնորդ Աբրրահամ վարդապետ Կրետացին, որը շուրջ 25 տարի (1709-1734 թթ.) եղել է Թեքիրդաղում և այդ պատճառով կոչվել նաև Թեքիրդաղցի: Այստեղ 1708 թվականին Բիմճառովել է նաև հայկական տպարան:

Թեքիրդաղում ընդօրինակված Մատենադարանի մեզ հայունի Արա Ճեռագրերից մանրանկարչական ձևավորում ունեն երկուսը: Դրանցից մեկը զրիչ Սարգիս Կեսարացու ընդօրինակած 1608 թվականի ժողովածուն է¹⁰, որտեղ հիշատակվում է Սարգիս զրչի նաև զծող լինելու մասին: «... Եւ զեղկելի զծող սորին Սարգիս զծողս զայս Կիսարացին մի մոռանար»¹¹: «... Եւ ինձ մեղաքը մեռեալ Սարգիս զրիչս...»¹²: «Կատարեցաւ Սուրբ զիրքս, որ ասի Ուսկի փորիկ քաղաքս Ընայսոս, ի դուռն ընդ Բովանդաւ Սուրբ Հրեշտակապետին: Զեռամբ նաստ և ներգևեալ ոգոյ, սուտանուն սակաւ զրչի...»¹³:

Սարգիսը կեսարացի էր, բայց Ճեռագիրը գրել է Ռուսություն՝ հյուրընկալվելով այնտեղ բնակվող Կեսարացի Ամիր Ազիզի կողմից. «Դարձեալ Աստուած ողորմի Կեսարացի Ամիր Ազիզին հոգոյն և իր Անշեցելոց հոգոց, որ խիստ պաղու ձմեռ էր, որ նստայ տունն, ի



Նկար 1

⁹ Հրայր Աճառյան, Հայ գաղթականության պարմություն, Երևան, 2002 թ., լ. 663:

¹⁰ Մագ. Ձեռ. 8532:

¹¹ Նոյեն Քեղոսմ, լ. 881ա:

¹² Նոյեն Քեղոսմ, լ. 101ա:

¹³ Նոյեն Քեղոսմ, լ. 202ա:

կրակին դէմն, գրեցի»¹⁴:

Հիշատակարաններում պարզ հիշատակվում է, որ Սարգիս եղել է թէ՛ զոհ և թէ՛ գծող (Ակարիչ):

Սովոր «Ուկեփորիկ» մատյանի մանրանկարները սակավ են: Զեռագիրն ունի կիսախորան, բուսական լուսանցազարդեր և թոշնային ու հանգուցային զարդատառեր, որոնք կատարված են վարպետորեն և գունային ճաշակա-¹³⁹

վոր համարդմամբ:

Առավել հետաքրքրական են Գալիբոլու կոչվող քաղաքի հայկական գրատան մասին մեզ հասած տվյալները, որը գործել է դեռևս 1722 թվականից: Ռարունապետն է եղել Աբրահամ Կրետացին: Ուշադրության արժանի է 1723 թվականին գրիշ Խաչկոյի ընթրինակած ժողովածում¹⁵:

Այս ընթրինակվել է Աբրահամ վարդապետ Կրետացու պատվերով: Այդ մասին գրչի հիշատակարանում ասված է: «Ըստացող աստուածային մատնեխս զպատուելի և զքաջ րաբունապետն ըգկրետացի Աբրահամ վարդապետն և զամենապն մերձակայս նորին. ընդ Ամին և զի՞ն եղելի, անշնօրք Խաչկո գրիշս Գալիպօլիցի լիշեցէր ի Քրիստոս, զի և դուր ընթերցողը լիշեալ լիշիք ի Ամանէ, ամէն»¹⁶:

Զեռագիր ավետարանական թեմաներով միակ Ակարը «Կոտորածն մականցն» է¹⁷: Չափազանց հետաքրքրական, յուրահատուկ հորինվածքը ու ունեցող միանալիք է առաջարկությամբ կատարված մի պատկեր, որը Հերովդեսը նստել է զաթիճ, արքայական շքեղ հանդերձներով: Նա ձեռքը մեկնել է առջևում կանգնած անձի՞ն՝ հրամայական ձևով, որ կատարեն իր ցանկությունը: Զախ կողմում կանգնած են զինվորներն իրենց գենքներով, Անրեւսում երեխայի մայրն է ծնկի եկած, իսկ առջևում բարուրված մանուկը: Աջում մեկ այլ մայր, որ զինվորի թիկունքն է բռնել, որը պատրաստվում է թրով հարվածել ձեռքում պահած մանկան (Ձկ. 1):

Ծքել է Աերկայացված հորինվածքի խորքը՝ իր խորանատիա զարդարում սյուներով: Օգտագործված է ոսկի, գունային համեղի համարմամբ: Խորանի վերին զարդամոտիվը հիշեցնում է պարսկական ծաղկազարդ:

Զեռագրի լուսանցքներում զետեղված են տասներկու մարզարեների պատկերները՝



Նկար 2

¹⁴ Նոյն գլուխում:

¹⁵ Մագ. Ձեռ. 1447: 1722-1723 թթ. Գալիպօլու:

¹⁶ Նոյն գլուխում, լ. 333ր:

¹⁷ Նոյն գլուխում, լ. 2ր:

Յրանց մասին եղած մեկնություններով: Ձեռագրի 129ա էջում պատկերված է Սողոմոնն՝ որպես թագավոր: Այդ է Վկայում Յրա ձեռքում պահված ոսկե գունդը՝ իշխանության, տիրակալության խորհրդանշը: Նա նստած է զարավորակին (Ձկ. 2):

Թե՛ տերութական նկարը և թե՛ տասներկու մարզարեների պատկերներն ունեն յուրահատուկ, հայկական ոչ բնորոշ ոճավորում: Յրանց շարժուն կեցվածքները, հագուստի ձևավորումներն ու դիմապատկերները կրում են եվրոպական արվեստի ազդեցությունը և կատարված են մեծ վարպետությամբ: Հակառակ դրա՝ ձեռագրի թե՛ զլիազարդերը, թե՛ լուսանցագարդերն ու զարդագրերը հարազատորնեն պահպանել են հայկական զարդամուխիները:

Գրիչ Խաչկոյի ընդօրինակությամբ է ստեղծվել նաև Գելիբոլու 1731 թվականի «Կանոնագիրը Հայոց» մատյանը¹⁸: Ձեռագիրը հարդարված է զլիազարդերով, լուսանցագարդերով ու զարդագրերով: Սակայն դրանք մեծ մասամբ գծապատկերներ են և ունեն սակավ գումավորում՝ կարմիր, կապուտ և աև:

Խաչկո գրիչը սույն մատյանում ունի մի քանի հիշատակագրություններ, որոնցում իրեն ներկայացնում է որպես գծող, «զգծող գրոյս զանարինստ Խաչկօ անշնորքս յիշեցէք»¹⁹: Հնարավոր է, որ Խաչկո գրիչը նաև Ակարազարդողն էր: Ընդօրինակվող ձեռագրի հեղինակը Աբրահամ Կրետացին է: «... Հեղինակաւ է նահանգին մերոյ տեառն Աբրահամ ճոռմարան վարդապետին Կրետացու, ի ՌՇԶ (1731) թուին...»²⁰:

Գրիչ Խաչկո Գալիբուղին է ընդօրինակել նաև 1733 թ. գրված ժողովածուն, այս անգամ՝ Ղազար Վարդապետի պատվերով: 1734-1737 թթ. Աբրահամ Կրետացին արդեն Ամենայն Հայոց Կաթողիկոս էր:

Ինարկե, Խաչկոն Գալիբոլու գրատան միակ գրիչը չեր: 1732 թվականին գրիչ Ծնորի երեցը ընդօրինակել է մի ժողովածու²¹, դարձալ Աբրահամ Կրետացու պատվերով: Ձեռագիրը Ակարազարդում չունի, բայց շնորհալի գրիչը թողել է չափածո հիշատակարան՝ Ավիրված Աբրահամ Կրետացուն.

«Սիրով ըզգիրս եղ նօտրել
Հեղինակն կթշրակիան
Շաբութեաց պետն Աբրահամ
Ազամբ և տոհմիւն կիտեան»²²:

Այսպիսով, Վերոբիշյալ գրչատներում ստեղծված մատյանների մանրանկարչության ուսումնասիրությունն օգնում է հարստացնելու հայ միջնադարյան մանրանկարչական արվեստի մասին ունեցած մեր գիտելիքները:

¹⁸ Ձև. 626:

¹⁹ Նոյն գլուխում, լ. 2 111ր:

²⁰ Ձև. 2969:

²¹ Ձև. 1675:

²² Ձև. 1675, լ. 274: